

Կոտայքի մարզպետը տարբեր համայնքներում մասնակցել է սեպտեմբերի մեկին նվիրված միջոցառումներին

01.09.2019

Այսօր Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը ներկա է գտնվել մարզային տարբեր համայնքներում մեկնարկած տոնական միջոցառումներին, որոնք նվիրված էին սեպտեմբերի մեկին՝ Գիտելիքի և դպրության օրվան:

Մարզպետը շրջել է կրթական հաստատություններով, զրուցել աշակերտների և մանկավարժների հետ:

Ռոմանոս Պետրոսյանը հանդես է եկել նաև ողջույնի խոսքով ու իր շնորհավորական ուղերձը հղել բոլոր դպրոցականներին, ուսանողներին և մանկավարժներին: